

Մարիաննա Եփրեմյան
ԵՊՀ արտասահմանյան գրականության ամբիոնի
հայցորդ
ORCID ID: 0009-0007-8883-1480
mariannayepremyan@ysu.am
DOI: 10.54503/1829-0116-2026.1-170

ՀԻՐԲԻԴ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ ԷԴՈՒԱՐԴՈ ՄԵՆԴՈՍԱՅԻ «ՏԻԿՆԱՆՑ ՎԱՐՄԱՀԱՐԴԱՐԻ ԱՐԿԱԾԸ» ՎԵՊՈՒՄ*

Բանալի բառեր – Էդուարդո Մենդոսա, հիբրիդային ինքնություն, պոստմոդերնիստական վեպ, դետեկտիվ, պարողիա, գրոտեսկ, «ֆրագմենտացված» սուբյեկտ:

Հոդվածում փորձ է արվում վերլուծել ինքնության խնդիրը, որը ժամանակակից փիլիսոփայության, սոցիոլոգիայի և գրականագիտության մեջ առանցքայիններից է: Անհատականությունն ավելի հաճախ ընկալվում է որպես դինամիկորեն փոփոխվող, «ֆրագմենտացված» և անկայուն սուբյեկտ: Այս համատեքստում գիտական շրջանառության մեջ է մտնում հիբրիդային ինքնության հասկացությունը, որը նկարագրում է մարդու գոյությունը սոցիալական, մշակութային և լեզվական հարթությունների հատման դաշտում:

Դրա վառ օրինակ է Է. Մենդոսայի արձակը, որը միավորում է սոցիալական երգիծանքի, պատմավեպի, դետեկտիվի, պիկարոյական վեպի և ֆանտաստիկայի տարրեր՝ ձևավորելով պոստմոդերնիստական իրականության բազմաշերտ պատկեր: Սույն հետազոտության նպատակն է բացահայտել և նկարագրել հիբրիդային ինքնության ձևավորման հիմնական մեխանիզմները Է. Մենդոսայի «Տիկնանց վարսահարդարի արկածը» վեպում, ինչպես նաև սահմանել տվյալ ինքնության դերը վիպական պատումի կազմակերպման, կերպարային համակարգի ձևավորման և պլուրետային դինամիկայի մեջ:

Հիբրիդային ինքնության ֆենոմենը, որպես ինքնություն և համակարգային օբյեկտ համալիր տեսական և նարատոլոգիական հետազոտության համար, մինչ օրս մնում է քիչ ուսումնասիրված:

* Հոդվածն ընդունվել է տպագրության 15.02.2026 թ.:
Ուղարկվել է գրախոսության 27.02.2026 թ.:

Marianna Yepremyan
PhD student
YSU, Chair of Foreign Literature
ORCID ID: 0009-0007-8883-1480
mariannayepremyan@ysu.am

HYBRID IDENTITY IN EDUARDO MENDOZA'S NOVEL THE ADVENTURE OF THE LADIES' HAIRDRESSER

Keywords: *Eduardo Mendoza, hybrid identity, postmodern novel, detective fiction, parody, grotesque, "fragmented" subject.*

The article addresses the problem of identity, which at the turn of the late twentieth and early twenty-first centuries has become one of the most significant issues in both philosophy and literary studies. Individuality is increasingly perceived as a dynamically changing, "fragmented," and unstable subject. In this context, the concept of hybrid identity enters scholarly discourse, describing human existence at the intersection of social, cultural, and linguistic planes. A vivid example of this phenomenon is found in the prose of Eduardo Mendoza, which combines elements of social satire, the historical novel, detective fiction, the picaresque novel, and fantasy, thereby constructing a multilayered image of postmodern reality. The aim of the present study is to identify and describe the principal mechanisms of the formation of hybrid identity in Eduardo Mendoza's novel *The Adventure of the Ladies' Hairdresser*, as well as to determine the role of this identity in the organization of the narrative, the construction of the system of characters, and the dynamics of the plot. The phenomenon of hybrid identity, considered as an autonomous and systematic object of comprehensive theoretical and narratological research, remains to date insufficiently studied.

Марианна Епремян
ЕГУ, Соискатель ученой степени на кафедре
зарубежной литературы
ORCID ID: 0009-0007-8883-1480
mariannayepremyan@ysu.am

ГИБРИДНАЯ ИДЕНТИЧНОСТЬ В РОМАНЕ ЭДУАРДО МЕНДОСЫ «ПРИКЛЮЧЕНИЕ ДАМСКОГО ПАРИКМАХЕРА»

Ключевые слова: *Эдуардо Мендоса, гибридная идентичность, постмодернистский роман, детектив, пародия, гротеск, «фрагментированный» субъект.*

Статья посвящена проблеме идентичности, которая в конце XX и начале XXI века стала одной из важнейших как в философии, так и в литературоведении. Индивидуальность всё чаще воспринимается как динамически изменяющийся, «фрагментированный» и нестабильный субъект. В этом контексте в научный оборот входит понятие гибридной идентичности, которое описывает существование человека на пересечении социальных, культурных и языковых плоскостей. Ярким примером этого служит проза Э. Мендосы, которая сочетает элементы социальной са-

тиры, исторического романа, детектива, пикарескного романа и фантастики, формируя многослойный образ постмодернистской реальности. Целью настоящего исследования является выявление и описание основных механизмов формирования гибридной идентичности в романе Э. Мендосы «Приключение дамского парикмахера», а также определение роли данной идентичности в организации нарратива, формировании системы персонажей и сюжетной динамики. Феномен гибридной идентичности, как самостоятельный и системный объект комплексного теоретического и нарратологического исследования, до настоящего времени остаётся малоизученным.

Ներածություն

XX դարի վերջում և XXI դարի սկզբին ինքնության խնդիրը դարձել է կարևորագույններից մեկը թե՛ փիլիսոփայության, թե՛ գրականագիտության մեջ: Ժամանակակից դարաշրջանում ամբողջական և միասնական «ես»-ի ավանդական պատկերացումը էականորեն վերանայվել է, ինչի հիմնական պատճառներն են միգրացիոն գործընթացների ինտենսիվացումը, մեգապոլիսների աճը և գլոբալացման խորացումը: Անհատականությունն ավելի հաճախ ընկալվում է որպես դինամիկորեն փոփոխվող, «մասնատված» և անկայուն սուբյեկտ: Այս համատեքստում շրջանառության մեջ է մտնում հիբրիդ ինքնության հասկացությունը, որը նկարագրում է մարդու գոյությունը սոցիալական, մշակութային և լեզվական հարթությունների խաչմերուկում:

Այս գործընթացները լայնորեն արտացոլվում են ժամանակակից իսպանական գրականության մեջ, որը ձևավորվում է հետֆրանկոյական անցումային շրջանի սոցիալական ու մշակութային վերափոխումների խորապատկերին: Արագացված ուրբանիզացիան, Իսպանիայի ինտեգրումը եվրոպական և գլոբալ տարածքին, ինչպես նաև քաղաքացիական պատերազմի պատմական փորձի քննադատական վերաիմաստավորումը պայմանավորում են նոր գրական հերոսի ի հայտ գալը: Այդ հերոսը միաժամանակ կրում է պիկարոյական և պոստմոդեռնիստական ավանդույթների հատկանիշներ, ինչը ձևավորում է ժամանակակից իսպանական վեպի նոր կառուցվածքային և ժանրային մոդելներ:

Է. Մենդոսայի ստեղծագործությունը հանդիսանում է այս անցումային դարաշրջանի առավել վառ գեղարվեստական արտահայտություններից մեկը: Հատկապես կարևոր է «Տիկնանց վարսահարդարի արկածը» (Mendoza E. La aventura del tocador de señoras, 2001) վեպը, որը ծաղրանմանակման դետեկտիվային ցիկլի երրորդ մասն է և առավել ամբողջական կերպով մարմնավորում է հիբրիդ ինքնության մոդելը:

Է. Մենդոսայի պոետիկայի առանձին կողմերը ուսումնասիրվել են Խ. Ռամոսի (Ramos J., 2008) և Ա. Մուկոյու Պելայոյի (Muñoz Pelayo A., 2012) աշ-

խաստություններում, որտեղ անդրադարձ է կատարվում երգիծանքի տարրերին, քաղաքային նարատիվի առանձնահատկություններին, ինքնության ճգնաժամի խնդիրներին և լեզվական բազմազանությանը: Սակայն հիբրիդ ինքնության ֆենոմենը՝ որպես ինքնություն և համակարգային հետազոտական օբյեկտ, նշված ուսումնասիրություններում լուսաբանվում է առավելապես մակերեսային և հատվածական կերպով՝ առանց համապարփակ տեսական և նարատոլոգիական վերլուծության:

Ռուս գրականագիտության շրջանակներում է. Մենդոսայի ստեղծագործությանը անդրադարձել են Գ. Գաչևը (Гачев Г., 1988) և Վ. Մազինը (Мазин В., 2007), որոնք սահմանափակվել են հեղինակի գեղարվեստական ժառանգության ընդհանուր ակնարկներով՝ շոշափելով պոստմոդեռնիստական սուբյեկտի մոդելներին առնչվող որոշ հարցեր: Այդուհանդերձ, նրանց աշխատություններում բացակայում է ինքնության կառուցման մեխանիզմների և դրա հիբրիդ բնույթի համալիր քննությունը, ինչպես նաև դրանց գործառության կապը նարատիվ կառուցվածքի և գեղարվեստական տարածության հետ:

Հետազոտության տեսական-մեթոդաբանական հիմքը կազմում են ամերիկացի գիտնական, ծագումով հնդիկ Հոմի Բհաբհայի աշխատությունները (Бхабха Х., 2016) (հիբրիդ մշակույթի և «երրորդ տարածքի» հայեցակարգ), Միխայիլ Բախտինի տեսությունները (Бахтин М., 1990) (կարնավալի, ծիծաղային մշակույթի և գրոտեսկային մարմնի մասին), ինչպես նաև Էդուարդ Սոյայի (Soja E., 1996) և Ջոն Ուրիի (Urry J., 2000) հետազոտությունները, որոնք նվիրված են քաղաքային տարածքի սոցիոմշակութային վերլուծությանը: Նշված տեսական մոտեցումների համադրումը հնարավորություն է տալիս դիտարկել Է. Մենդոսայի վեպը որպես բազմադիսկուրսիվ բախման տարածք, որի շրջանակներում ձևավորվում է սկզբունքորեն նոր՝ պոստմոդեռնիստական սուբյեկտայնություն:

Սույն հետազոտության գիտական նորույթը կայանում է նրանում, որ առաջին անգամ իրականացվում է «Տիկնանց վարսահարդարի արկածը» վեպում հիբրիդ ինքնության համալիր և համակարգային վերլուծություն: Հիբրիդության տեսությունները կիրառվում են XXI դարի սկզբի իսպանական պոստմոդեռնիստական վեպի նկատմամբ, ինչը մինչ այժմ գրականագիտության մեջ գրեթե չի իրականացվել: Բացի այդ՝ բացահայտվում են սուբյեկտի՝ որպես հիբրիդ կառուցվածքի և քաղաքային տարածքի կազմակերպման միջև առկա խորքային փոխկապակցումները: Միաժամանակ գրոտեսկն ու կառնավալը մեկնաբանվում են ոչ թե որպես զուտ գեղարվեստական հնարներ, այլ որպես սուբյեկտի մարդաբանական (անտրոպոլո-

գիական) վերափոխման հիմնարար մեխանիզմներ, որոնք պայմանավորում են ինքնության շարժուն, բազմաշերտ և չֆիքսվող բնույթը:

Տվյալ հետազոտության մեթոդաբանական հենքը ձևավորվում է մշակութաբանական և ինտերտեքստուալ, պատմահամեմատական վերլուծության, ինչպես նաև կերպարի խոսքային պրակտիկաների քննության համադրմամբ: Նշված մեթոդների կիրառումը պայմանավորված է հիբրիդության ֆենոմենի բնույթով, որը չի կարող ամբողջապես բացահայտվել մեկ գիտակարգի շրջանակներում և պահանջում է միջդիսցիպլինար մոտեցում՝ գրականագիտության, փիլիսոփայության և մշակութաբանության խաչմերուկում: Մեթոդաբանական դիտարկման կետերի բազմազանությունը հնարավորություն է տալիս վերլուծել հիբրիդ ինքնությունը ոչ միայն որպես գեղարվեստական կառուցվածք, այլև որպես դիսկուրսիվ և սոցիոմշակութային երևույթ:

«Տիկնանց վարսահարդարի արկածը» վեպը

Է. Մենդոսայի «Տիկնանց վարսահարդարի արկածը» վեպը առանձնահատուկ տեղ է զբաղեցնում ոչ միայն գրողի ստեղծագործական էվոյուցիայի, այլև իսպանական պոստմոդեռնիստական գրականության ավելի լայն համատեքստում: Շարունակելով ծաղրանմանական դետեկտիվային ցիկլի գիծը՝ հեղինակն այս ստեղծագործության մեջ ձևավորում է հիբրիդ ինքնության առավել բարդ, բազմաշերտ և գեղարվեստորեն հագեցած մոդելներից մեկը: Այդ մոդելի շրջանակներում համադրվում և փոխներթափանցում են պիկարոյական ավանդույթի տարրերը, գրոտեսկային պատկերայնությունը, կառնավալային ծիծաղային մշակույթը և ժանրային խաղի ռազմավարությունները, որոնք միասին պայմանավորում են սուբյեկտի անկայուն, շարժուն և բազմակենտրոն ինքնության ձևավորումը:

«Տիկնանց վարսահարդարի արկածը» վեպը շարունակությունն է անանուն հերոսի մասին պատմող պարոդիական դետեկտիվային ցիկլի, որի կենտրոնում գտնվում է կերպար, որը մշտապես ներգրավվում է խճճված, հաճախ աբսուրդային արկածախնդրությունների մեջ՝ արագ և բուռն կերպով փոխակերպվող Բարսելոնայի սոցիոմշակութային ֆոնի վրա: Թեպետ սյուժեն առաջին հայացքից կարող է ընկալվել որպես անհեթեթ և խաղային, նարատիվը կառուցված է որպես բարդ և բազմաշերտ սոցիալական երգիծանք՝ ուղղված ժամանակակից Իսպանիայի բյուրոկրատական համակարգի, քաղաքական կյանքի և քաղաքային քառսի քննադատությանը: Այդպիսով, իրադարձությունների զարգացումը վերածվում է ոչ միայն ժանրային խաղի, այլև ժամանակակից մարդու խարխիված, անկայուն և մշտապես փոփոխվող ինքնության հետազոտության:

Վեպի սկզբում գլխավոր հերոսը գտնվում է հոգեբուժարանում, որտեղ նա կրկին հայտնվել է նախորդ արկածների հետևանքով: Մակայն պլոժետային շարժման ընթացքում նրան առաջարկվում է հերթական «հնարավորությունը»՝ քաղաքում տեղի ունեցած հանցագործության բացահայտմանը մասնակցելու համար: Ոստիկանությունը, օգտագործելով հերոսի մարզինալ դիրքը, նրան ներգրավում է որպես տեղեկատու և քննության «սովերային» մասնակից: Ազատ արձակվելով պայմանական հսկողության ներքո՝ նա հայտնվում է քաղաքային հորձանուտի կենտրոնում, որտեղ քաղաքական ուժերը, քրեական աշխարհը, մասնավոր շահերը և մեղիա դիսկուրսը խաչվում են ամենաանսպասելի և քառասային ձևերով:

Հերոսի ինքնարտահայտման խոսքային ակտերը շարունակաբար ընդգծում են նրա ինքնության անորոշ և ապակայուն վիճակը: «Ես չգիտեի, թե ով եմ և ով պետք է լինեմ»,— խոստովանում է նա (Mendoza, 2001: 103)՝ ձևակերպելով պոստմոդեռնիստական սուբյեկտի հիմնարար խնդիրը, որի ինքնությունը կառուցվում է ոչ թե կայուն սոցիալական դերերի, այլ իրավիճակային դերակատարումների և դիսկուրսիվ ճնշումների ներքո: Այս կերպ վեպի նարատիվը վերածվում է հիբրիդ ինքնության ձևավորման և քայքայման դինամիկ գործընթացի գրական մոդելավորման:

Սյուժետային զարգացման առաջին խթանը պայմանավորված է խորհրդավոր սպանությամբ և դրան հաջորդող անհեթեթ միջադեպերի շարքով, որոնք առնչվում են ազդեցիկ ձեռնարկատերերի ընտանիքի հետ: Գլխավոր հերոսը, գրեթե պատահականորեն հայտնվելով իրադարձությունների անմիջական հարևանությամբ, աստիճանաբար ներգրավվում է հետաքննության գործընթացի մեջ՝ առանց տեղի ունեցածի հստակ պատկերացման: Այս «պատահական ներգրավվածությունը» կանխորոշում է նարատիվի աբսուրդիստական տրամաբանությունը և ընդգծում է հերոսի մարզինալ դիրքը սոցիալական համակարգում:

Մակայն հենց սոցիալական հստակ դերակատարության բացակայությունն է, որ կերպարին դարձնում է մանիպուլյացիաների համար առանձնապես հարմար գործիք: Ոստիկանությունը, իշխանական կառույցների ներկայացուցիչները և մասնավոր կազմակերպությունները հերթով դիմում են նրան՝ յուրաքանչյուր անգամ պարտադրելով նոր դերային մոդել: Տարբեր դրվագներում նա հանդես է գալիս որպես վկա, ապա՝ որպես կասկածյալ, միջնորդ կամ նույնիսկ կասկածելի հանձնարարությունների կատարող: Այս բազմակի և փոխադարձաբար հակասական դերերը ոչ միայն չեն նպաստում ինքնության կայունացմանը, այլև խորացնում են դրա ապակայունությունն ու հիբրիդ բնույթը: Ինքը՝ պրոտագոնիստը, անկարող է հստակ սահմանել սեփական կարգավիճակը. «Ես ոչ դետեկտիվ

էի, ոչ էլ պրոֆեսիոնալ հանցագործ, այլ ինչ-որ անորոշ բան, հանգամանքներով ստեղծված հիբրիդ», - խոստովանում է նա՝ բառացիորեն ձևակերպելով հիբրիդ սուբյեկտի ինքնագիտակցման մոդելը (Mendoza, 2001: 143):

Ինչպես անանուն հերոսի մասին պատմող ցիկլի նախորդ վեպերում, այստեղ ևս նարատիվը զարգանում է աբսուրդիստական հակադեմոկրատիկ տրամաբանությամբ: Հերոսը չի ձգտում բացահայտել օբյեկտիվ ճշմարտությունը և չի տիրապետում ո՛չ մասնագիտական հմտությունների, ո՛չ էլ դասական դեմոկրատիկ բնորոշ տրամաբանական մտածողության: Նրա վարքագիծը ղեկավարվում է ոչ թե նպատակային ռազմավարությամբ, այլ իրավիճակային ճնշումներով, իսկ գործողությունների շարժիչ ուժը հիմնականում պայմանավորված է ֆիզիկական գոյատևման անհրաժեշտությամբ: Այս հանգամանքը նարատիվում վերածվում է պոստմոդեռնիստական սուբյեկտի գոյաբանական անորոշության և ինքնության շարժունության կարևոր ցուցիչի:

Այսպիսով, վեպում հիբրիդ ինքնության կենտրոնական կրողը հանդես է գալիս որպես հերոս-պատմող, որը, ձևականորեն լինելով մեկ ամբողջական կերպար, իր մեջ ներառում է հակասական դերերի և դիմակների ամբողջական սպեկտր: Նրա անձը բնութագրվում է կերպարափոխությամբ, դերային փոփոխականությամբ և ամբողջական, ինտեգրված «ես»-ի մշտական քայքայմամբ: Հերոսը չի տիրապետում կայուն ինքնության մոդելի և, հետևաբար, ապրում, մտածում ու գործում է մշտական երկատման և ինքնագիտակցական ճեղքվածքի վիճակում: «Ես բաժանված մարդ էի, կազմված ուրիշների մասերից», - խոստովանում է նա (E. Mendoza, 2001: 165)՝ հստակ արտահայտելով պոստմոդեռնիստական սուբյեկտի ապակենտրոնացված ինքնության գաղափարը:

Ինքնության այս շարունակական տեղաշարժը ստեղծում է սուբյեկտի բազմակիության էֆեկտ, որի շրջանակներում հերոսը միաժամանակ հանդես է գալիս տարբեր, հաճախ իրար հակասող դերային դիրքերում: Նա կարող է դիտարկվել որպես հանցագործ, պատահական դեմոկրատիկ, հոգեկան հիվանդ, սոցիալական մարգինալ և միաժամանակ ռեֆլեքսիվ, գրեթե փիլիսոփայական հայացքով օժտված դիտորդ: Նրա ինքնությունը ներկայացվում է որպես շարժուն և հոսուն կառուցվածք, որը անդադար կերպափոխվում է՝ կախված կոնկրետ համատեքստից, իրավիճակային ճնշումներից և սոցիալական պայմաններից: Միննույն ժամանակ կերպարը հանդես է գալիս որպես ժողովրդական կոմիկական մշակույթի կրող՝ մարմնավորելով ծիծաղային, գրոտեսկային և կառնավալային աշխարհընկալումը, որը հակադրվում է ինստիտուցիոնալ կարգին և հաստատված ինքնության մոդելներին:

Այս կերպարը գոյություն ունի դերերի մշտական փոփոխության վիճակում, որտեղ «ես»-ի և դիմակի սահմանները ջնջվում են: Այս երևույթը համահունչ է Հ. Բհաբհայի հիբրիդության տեսությանը, ըստ որի ժամանակակից սուբյեկտայնությունը ձևավորվում է «երրորդ տարածքում»՝ մշակութային և սոցիալական դիրքերի խաչմերուկում, որտեղ ինքնությունը գործընթաց է, այլ ոչ թե էություն: Հերոսը չի ընկալում իր մարգինալությունը որպես թերաբեքություն, հակառակը, այն դառնում է գործիք՝ քաղաքային կյանքի «ստվերային» շերտերը հասկանալու և մեկնաբանելու համար:

Հիբրիդ ինքնության կարևոր դրսևորումներից է հերոսի լեզվական պրակտիկան: Նրա խոսքը մշտապես փոխվում է՝ կախված իրավիճակից և ստանձնած դերից. բյուրոկրատական լեզուն փոխարինվում է փիլիսոփայական մտորումներով, իրավաբանական տերմինաբանությամբ կամ հեղինական հնչերանգներով: Այս խոսքային բազմաշերտությունը հակադրվում է հեղինակի՝ հարաբերականորեն միաձայն նարատիվ տոնայնությանը և դառնում է անկայուն ինքնության կառուցման միջոց:

Հիբրիդ ինքնության ձևավորման մեջ առանցքային դեր ունի նաև քաղաքային տարածքը: Է. Մենդոսայի Բարսելոնան ներկայացվում է ծայրահեղ բևեռացված կառուցվածքով՝ պաշտոնական և ստվերային աշխարհներ, պատմական թաղամասեր և ժամանակակից կենտրոններ, էլիտար և մարգինալ տարածքներ: Քաղաքը հանդես է գալիս որպես «կարնավալացված» օրգանիզմ, որտեղ սոցիալական սահմանները պայմանական են: Ինչպես նշում է Ա. Մունյոս Պելայոն, Է. Մենդոսայի Բարսելոնան մշտական վերափոխման մեջ գտնվող տարածք է, որը ստիպում է սուբյեկտին անդադար վերաիմաստավորել ինքն իրեն (Muñoz Pelayo, 2012: 133): Քաղաքի հիբրիդ պատկերը ձևավորում է հերոսի հիբրիդ գիտակցությունը, որն այլընտրանք չունի, քան հարմարվել այս փոփոխական միջավայրին:

Կարնավալայնությունն ու գրոտեսկը ևս էական տեղ են գրավում ինքնության հիբրիդացման գործընթացում: Հերոսի կերպարափոխությունները, ներառյալ գենդերային փոխակերպումները, հանդես են գալիս ոչ միայն որպես կոմիկական հնարներ, այլ որպես ինքնության փոփոխականության մետաֆորաներ: Կանացի հագուստ կրելը դառնում է գենդերային հիբրիդացման ակնառու պատկեր, որտեղ կերպարը ոչ թե ընդօրինակում է իրականությունը, այլ ակտիվորեն ձևավորում է այն:

Վեպի կառուցվածքում կարևոր դեր են խաղում ինտերտեքստուալ (միջտեքստային) կապերը: Հեղինակը երկխոսության մեջ է մտնում իսպանական պիկարոյական ավանդույթի, դասական դետեկտիվի, ամերիկյան «նուար» ժանրի, ինչպես նաև գոթական և բուրլեսկային գրականության հետ: Հերոսը մի դրվագում հիշեցնում է Լասարիլյո Տորմեսցուն, իսկ մյու-

սում՝ ամերիկյան «սև գծի» («նուար դետեկտիվ») անհաջողակ քննիչին: Այս ինտերտեքստուալ խաղը քանդում է ժանրային հստակ սահմանները և ձևավորում է սուբյեկտի հիբրիդ մոդել, որը գոյություն ունի գրական դարաշրջանների և դիսկուրսների խաչմերուկում:

Ծաղրանմանակումը հանդես է գալիս որպես այս հիբրիդության կենտրոնական մեխանիզմ: Քանդելով դետեկտիվ ժանրի կառուցվածքային տրամաբանությունը՝ Է. Մենդոսան միաժամանակ ստեղծում է նոր իմաստային տարածք, որտեղ ինքնությունը ձևավորվում է բազմակի «մասնակի պատկանելությունների» միջոցով: Ծաղրանմանակումը դառնում է ֆիքսված սուբյեկտային մոդելներից «ազատագրման» միջոց՝ թույլ տալով ձայների, տեսանկյունների և արժեհամակարգերի բազմազանություն:

Եզրակացություն

Կարելի է պնդել, որ «Տիկնանց վարսահարդարի արկածը» վեպում հիբրիդ ինքնությունը համակարգաստեղծ սկզբունք է, որը թափանցում է նարատիվի բոլոր մակարդակները: Կենտրոնական կերպարը գոյություն ունի մշտական անցման վիճակում՝ գուրկ սոցիալական, հոգեբանական և գենդերային կայուն սահմանվածությունից: Նրա սուբյեկտայնությունը ձևավորվում է սոցիալական դերերի, քաղաքային տարածքի և ժանրային մեխանիզմների շարունակական փոխազդեցության արդյունքում: Վեպի գլխավոր սուբյեկտը գոյատևում է սեփական ինքնության անդադար փոփոխության և դերային խաղի միջոցով: Այսպիսով, հիբրիդ ինքնությունը ներկայանում է ոչ թե որպես ճգնաժամ, այլ որպես կենսական կայունության սկզբունք մի աշխարհում, որտեղ ավանդական սահմանները գրեթե լիովին ջնջված են: Միննույն ժամանակ Է. Մենդոսայի վեպը ցույց է տալիս, որ ժամանակակից անհատականությունը դատապարտված է հիբրիդության, սակայն այդ «դատապարտվածությունը» միննույն ժամանակ իր մեջ կրում է ազատության, ստեղծագործական և մշակութային փորձի վերաիմաստավորման ներուժ:

Պոստմոդեռնիստական վեպին ընդհանրապես և Է. Մենդոսայի «Տիկնանց վարսահարդարի արկածը» վեպին մասնավորապես բնորոշ է ոչ միայն սուբյեկտի ավանդական կատեգորիաների հետևողական ապակառուցումը, այլև ժանրի և գեղարվեստական պատումի ապամոնտաժումը: Այս համատեքստում հիբրիդությունը հանդես է գալիս ոչ թե որպես հերոսի անհատական բնութագրիչ կամ պատմողական ոճական առանձնահատկություն, այլ որպես վեպի ամբողջական կազմակերպչական սկզբունք, որը պայմանավորում է տեքստի կառուցվածքը, իմաստաբանական դաշտը և նարատիվ տրամաբանությունը:

Արդյունքում գեղարվեստական տեքստը վերածվում է յուրօրինակ փորձարարական հարթակի՝ ուղղված սուբյեկտի «բազմադեմության», լեզվի, տարածքի և ժանրի բազմաշերտության ուսումնասիրմանը: Վեպը ցուցադրում է, թե ինչպես անցումային դարաշրջանի պայմաններում՝ հետֆրանկիստական Իսպանիայում, որը խորապես ներգրավված է ուրբանիզացիայի և գլոբալացման ինտենսիվ գործընթացների մեջ, ձևավորվում են անհատականության նոր տիպեր, որոնք չեն ենթարկվում ավանդական սոցիալական և գրական տիպաբանություններին և բնութագրվում են ինքնության շարժունությամբ ու չֆիքսվող բնույթով: Հիբրիդությունը, ըստ Հ. Բհաբհայի, «պատրաստ մշակութային ձևերի խառնուրդ չէ, այլ գործընթաց է», որի ընթացքում ձևավորվում է *մի նոր տարածք*, «որը քանդում է մաքրության և ֆիքսված ինքնության հավակնությունը» (Бхабха, 2016: 56–57):

Տվյալ վեպում հիբրիդ ինքնության ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս բացահայտելու, թե ինչպես է պոստմոդեռնիստական գրականությունը վերաիմաստավորում XX դարի վերջի մշակութային և սոցիալական փոխակերպումները՝ օգտագործելով ծիծաղը, ծաղրանմանակումը և գրոտեսկը որպես ապակառուցման արդյունավետ գործիքներ: Այդ կերպ վեպը դառնում է ինքնության դինամիկայի և դրա հիբրիդային վերափոխումների վերլուծության մոդելային օրինակ գլոբալ սոցիալական և մշակութային փոփոխությունների պայմաններում:

Գրականության ցանկ

1. **Mendoza E.**, La aventura del tocador de señoras. Barcelona: Seix Barral, 2001, 224 p.
2. **Muñoz Pelayo A.**, Identidad urbana y humor en la narrativa española contemporánea. Barcelona: Ariel, 2012, 318 p.
3. **Ramos J.**, Eduardo Mendoza y la parodia posmoderna. Madrid: Alianza, 2008, 256 p.
4. **Soja E.**, Thirdspace. Oxford: Blackwell, 1996, 334 p.
5. **Urry J.**, Sociology beyond Societies. London: Routledge, 2000, 336 p.
6. **Бахтин М.**, Творчество Франсуа Рабле и народная культура средневековья и Ренессанса. Москва: Художественная литература, 1990, 543 с.
7. **Бхабха Х.**, Местоположение культуры. Москва: Изд-во ИНИОН, 2016, 412 с.
8. **Гачев Г.**, Национальные образы мира. Москва: Прогресс, 1988, 448 с.
9. **Мазин В.**, Кризис субъекта в культуре постмодерна. Москва: Новое литературное обозрение, 2007, 304 с.

References

1. **Bakhtin M.**, Tvorchestvo Fransua Rable i narodnaia kul'tura srednevekov'ia i Renessansa. Moscow: Khudozhestvennaia Literatura, 1990, 543 p. (In Russ)
2. **Bhabha H.**, Mestopolozhenie kul'tury. Moscow: INION Publishing House, 2016, 412 p. (In Russ)
3. **Gachev G.**, Natsional'nye obrazy mira. Moscow: Progress, 1988, 448 p. (In Russ)

4. **Mazin V.**, Krizis sub'ekta v kul'ture postmoderna. Moscow: Novoe Literaturnoe Obozrenie, 2007, 304 p. (In Russ)
5. **Mendoza E.**, La aventura del tocador de señoras. Barcelona: Seix Barral, 2001, 224 p.
6. **Muñoz Pelayo A.**, Identidad urbana y humor en la narrativa española contemporánea. Barcelona: Ariel, 2012, 318 p.
7. **Ramos J.**, Eduardo Mendoza y la parodia posmoderna. Madrid: Alianza, 2008, 256 p.
8. **Soja E.**, Thirdspace. Oxford: Blackwell, 1996, 334 p.
9. **Urry J.**, Sociology beyond Societies. London: Routledge, 2000, 336 p.

Մարիաննա Եփրեմյան – Երևանի պետական համալսարանի Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի իսպաներենի դասախոս, նույն համալսարանի արտասահմանյան գրականության ամբիոնի հայցորդ:

Գիտական հետաքրքրությունների շրջանակը ընդգրկում է արտասահմանյան գրականությունը, արդի իսպանալեզու գրականությունն ու գրաքննադատությունը, գեղարվեստական թարգմանության հիմնահարցերը: Հեղինակ է մի շարք գիտական հոդվածների:

ORCID ID: 0009-0007-8883-1480

mariannayepremyan@ysu.am

Марианна Епремян – преподаватель испанского языка Факультета Европейских Языков и Коммуникации Ереванского Государственного Университета, соискатель кафедры зарубежной литературы того же университета.

Сфера научных интересов включает зарубежную литературу, современную испаноязычную литературу и литературную критику, а также основные проблемы художественного перевода. Автор ряда научных статей.

ORCID ID: 0009-0007-8883-1480

mariannayepremyan@ysu.am

Marianna Yepremyan – lecturer of Spanish at the Faculty of European Languages and Communication of Yerevan State University and a doctoral candidate at the Department of Foreign Literature of the same university.

Her research interests include foreign literature, contemporary Spanish-language literature and literary criticism, as well as key issues of literary (fiction) translation. She is the author of a number of scholarly articles.

ORCID ID: 0009-0007-8883-1480

mariannayepremyan@ysu.am